



Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան)

ՈՐՈՇՈՒՄ

Թիւ N°26 – 2019.09.13

**Հայկական Լեռնաշխարհի եւ անոր անմիջապէս մօտիկ շրջաններուն մէջ ապրող
Հայերը որպէս բնիկ ազգ ճանչնալու հարցը:**

Առաջնորդուելով, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Սահմանադրութեամբ, որն ընդունուած է 9 Մայիս 2016թ.-ին,

Նկատի առնելով, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պաշտօնական Հռչակագիրը, որն ընդունուած է 20 Յունուար 2007թ.-ին.

<http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2007/AHKH-Hrtchakagir-20.01.2007.pdf>

Նկատի առնելով, ՄԱԿ-ի Բնիկ Ժողովուրդներու Հռչակագիրը, որն ընդունուած է 13 Սեպտեմբեր 2007թ.-ին.

http://www.western-armenia.eu/news/Actualite/2017/MAG_Pnig_Joghvourtneri_iravounqneri_massin_hrtchagagir-20.01.2017.pdf

Նկատի առնելով, ՄԱԿ-ի բոլոր պայմանադրութիւնները, բանաձեւերն ու հռչակագիրները, որոնք կը պաշտպանեն բնիկ ժողովուրդներու իրաւունքները.

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը),

Կ'որոշէ,

ճանչնալ Հայերը որպէս բարձր քաղաքակրթութեան բնիկ ազգ, որ հազարամեակներէ ի վեր գոյութիւն ունի Պատմական Հայաստանի՝ Հայկական Լեռնաշխարհի եւ Հարակից Տարածքներուն վրայ, որն իր մէջ կ'ընդգրկէ նաեւ Արցախը, Զաւախքը, Նախճաւանն ու Կիլիկիան

Աղումն ՏՕՆԱԿԱՆԵԱՆ

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
Նախագահ**

07.10.2019թ.